



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

6041

U'uhnd u'um p'auk
gls S

U-ny uny qf .

891.99

U-59

677

ԱՆՀԱՒԱՏՈՒԹԵԱՆ ԴԷՄ

«ՄՈՎՍԵՍ ՈՒՐ ԳՏԱՒ»

ԱՅՍ ՕՐԷՆԻ

Էջ 7.

ԶՈՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

معارف عمومیہ نظارت جلیہ سنک رخصتیلہ طبع او نشتدر
Հրամանաւ ժողովոյ պաշտօնէից Հասարակաց կրթութեան

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1884

291.99
Վ-59

2003

2011

ԱՆՀԱԻԱՏՈՒԹԵԱՆ ԴԷՄ

891.99

Կ-59 "ՄՈՎՍԷՍ ՈՒՐ ԳՏԱԻ

ԱՅՍ ՕՐԷՆՔԸ"

պ

էջ 7

ԶՈՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ




Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1884

ԱՆՀԱՒԱՏՈՒԹԵԱՆ ԴԷՄ



« ՄՈՎՍԷՍ ՈՒՐ ԳՏԱԻ ԱՅՍ ՕՐԷՆԻՔԸ »

Մեծարոյ եւ տաղանդաւոր իրաւագէտ մը կը բնակէր գեղեցիկ քաղաք մը յԱմերիկա: Անհաւատ, եւ մանաւանդ հայհոյիչ էր այս մարդը: Դրացիներն անգամ կը լսէին հայհոյութիւնները զորս կը թափէր նա իւր սեւ Ափրիկեցի սպասաւորին գըլխուն, որուն հետ միշտ չարաչար կը վարուէր:

Օր մը այս մարդը հանդիպեցաւ բարեպաշտ Քրիստոնէի մը որ նոյնպէս իրաւագէտ էր, եւ ըսաւ անոր. « Բարեկամ, կ'ուզեմ քննել Քրիստոնէական կրօնին ճշմարտութիւնը. գիտեմ որ այս նիւթոյս վրայ խօսող շատ գիրքեր կան, բայց չեմ գիտեր թէ ո՞րը կարդամ. դուք անոնց ո՞րն յարմար կը դատէք: »

Բարեպաշտ իրաւագէտը զարմացաւ իւր անհաւատ բարեկամին այս հարցման վրայ, եւ ըսաւ. « Բարեկամ, Քրիստոնէական կրօնին ճշմարտութիւնը վաղուց պարտ էր ձեզ ստուգել, կը զարմանամ որ այսպիսի կարեւոր նիւթոյ քննութիւնը թողած էք մինչեւ ցարդ: »

« Այո, » ըսաւ միւսը, « այս քննութիւնը շատ առաջ ընելու էի, բայց չէի խորհեր թէ այնչափ կարեւոր է այս նիւթը, նաեւ կը կարծէի մանաւանդ



30 008 - 4. h.

(187
39)

12460-58 P-

թէ գիտուն եւ ազատամիտ մարդոց շատերն, իբրեւ չնչին ինչ կ'արհամարհեն Քրիստոնէութիւնը: Ձիարդ եւ իցէ, ես հիմա կ'ուզեմ խնամով քննել այս նիւթը, քանզի մահացու ախտ մը ունիմ, ինչպէս կ'ըսէ բժիշկս, եւ որովհետեւ չեմ կարծեր թէ պիտի կրնամ երկար ապրիլ, թերեւս տարի ու կէս, կամ, եթէ շատ աւելի՝ երկու տարի, հարկ կը համարիմ այս կարեւոր նիւթին վրայ վերջին որոշումս ընել: Ուրեմն ի՞նչ գիրք կարդալ խրատ կու տաք ինձ: »

« Աստուածաշունչ Գիրքը, » պատասխանեց բարեկամը:

Անհաւատը վարմացաւ բարեկամին այս պատասխանին վրայ, ինչպէս բարեկամն իսկ անոր առաջին հարցման վրայ վարմացած էր, եւ ըսաւ. « Կարծեմ չհասկցաք միտքս. ես կ'ուզեմ քննել Աստուածաշունչին ճշմարտութիւնը: »

« Հասկցայ ձեր միտքը, » ըսաւ Քրիստոնեայ բարեկամը, « եւ այս աղագաւ կը խրատեմ զձեզ կարդալ Աստուածաշունչ Գիրքը: Եթէ կամիք, ցուցնեմ պատճառներս: Նախ՝ վասն զի երբ կ'ուզենք նութոյ մը վրայ որոշում ընել, պարտինք գիտնալ քաջ թէ ինչ է այն նիւթը, եւ ապա որոշում ընել. արդ՝ անհաւատից շատը բնաւ չեն գիտեր, կամ հարեւանցի իմն գիտեն թէ ինչ կայ Սուրբ Գրոց մէջ: Երկրորդ՝ Սուրբ Գրոց զօրաւորագոյն ապացոյցները նոյն իսկ Սուրբ Գրոց մէջ են, այսինքն անոր սրբութիւնը, խմաստութիւնը, բարութիւնը, խորութիւնը, այլովքն հանդերձ: »

« Եւ ուստի՞ սկսիմ. Նոր կտակարանէն, » հարցուց անհաւատը:

« Ոչ, » ըսաւ բարեկամը, « Հին կտակարանին սկիզբէն, Ծննդոց գիրքէն: »

Անհաւատն Աստուածաշունչ մը գնեց, եւ տուն երթալով նստաւ եւ սկսաւ կարդալ զգուշութեամբ: Իւր սուր եւ կիրթ դատողութեամբ խիստ եւ անաչառ քննութիւններ կ'ընէր Սուրբ Գրոց ճշմարտութիւններուն վրայ: Քրիստոնեայ բարեկամը շատ անգամ այցելութեան գալով կը գտնէր զնա Աստուածաշունչ կարդալու զբաղած: Անհաւատը կը խօսէր եւ կը վիճէր անոր հետ համարձակ շատ բաներու վրայ: Այս ինչ բանը կ'ընդունէր, այն ինչ բանը կը գտնէր ազդու եւ գեղեցիկ, կար նաեւ բան որուն չեմ կրնար հաւատալ կ'ըսէր:

Իրիկուն մը Քրիստոնեայ իրաւագէտն անհաւատին տունը երթալով տեսաւ որ բարեկամը կը ձեմէր սենեկին մէջ այնպէս մտախորհ՝ որ չիմացաւ անոր գալուստը: « Մի՞ն խորհուրդներու մէջ ընկզմած կը տեսնեմ զձեզ. » ըսաւ բարեկամը խօսել սկսելով, « Ի՞նչ է այդ խորին մտածութեան պատճառը: »

« Տասը պատուիրանները կարդացի, եւ անոնց վրայ կը խորհիմ, » ըսաւ անհաւատը:

« Աղէկ, ի՞նչ կը խորհիք այն պատուիրաններուն վրայ, » հարցուց միւսը:

« Նախ ըսեմ ձեզ ինչ որ կը խորհէի առաջ, » ըսաւ անհաւատը: « Ես կը կարծէի թէ Մովսէս լեռները թափառող աւազակաց գունդի մը առաջնորդ էր, եւ իւր հանձարով եւ խորագիտութեամբ ձեռք բերաւ վերին լշխանութիւնը սնապաշտ ժողովրդեան մը վրայ, եւ թէ Սինա լեռան վրայ ար-

ուեստիւր վառուած կրակ երեւցունելով չգարմացուց իւր սպուշ հետեւողները, որոց երկիւզախառն սնապաշտութիւնը կարծեցուց անոնց թէ գերբնական տեսիլ էր այն:»

«Հիմա, ի՞նչ կը խորհիք,» ըսաւ բարեկամը:

«Այն օրէնքին այլեւայլ յատկութիւնները դիտելով,» ըսաւ անհաւատը, «կը խորհիմ թէ կըրնամ արդեօք անոր մէջ սխալ մը գտնել կամ բան մը յաւելուլ անոր վրայ, կամ բան մը պակսեցունել անկէ, որպէս զի կատարեալ ընեմ, բայց չեմ կրնար, քանզի արդէն կատարեալ է: Կը տեսնեմ որ առաջին պատուիրանն առ Աստուած կ'ըզդէ զմեզ, որպէս զի սիրենք զնա եւ պատուենք բոլոր սրտով. եւ այսպէս ընել իրաւացի է: Եթէ Աստուած մեր արարիչը, պաշտպանը եւ գերագոյն բարերարն է, պարտինք իբրեւ արարիչ, պաշտպան եւ բարերար սիրել եւ պատուել զնա միայն՝ եւ ոչ զայլ ոք:»

«Երկրորդ պատուիրանը կ'արգելու կռապաշտութիւնը, եւ այս եւս իրաւացի է:»

«Երրորդը կ'արգելու երդնուլ յանուն Աստուծոյ յանպէտս եւ ի զուր:»

«Չորրորդը կը հաստատէ Աստուծոյ պաշտօն մատուցանելու որոշեալ ժամանակ: Եթէ գոյ Աստուած, պարտինք պաշտել զնա. արտաքին մեծաբանք պէտք է ներքինը յայտնելու: Եթէ զԱստուած պաշտել պէտք է, պէտք է նաեւ այս պաշտաման համար որոշեալ ժամանակ, որպէս զի բոլոր մարդիկ պաշտեն զնա միաբան եւ անխափան: Իսկ զԱստուած պաշտելու համար եօթնեկին մէկ օրը ոչ շատ է եւ ոչ քիչ:»

«Հինգերորդ պատուիրանը կը ցուցնէ պարտականութիւններ որ ընտանեկան կապակցութենէ յառաջ կու գան:»

«Միւս պատուէրները կ'արգելուն ուրիշներուն կենաց, պատուոյն կամ համեստութեան, ընչից եւ համբաւոյն դէմ փնասներ:»

Ապա տասն պատուիրանաց այս վերջին մասին վրայ գեղեցիկ խորհրդածութիւն մը ընելով, «Կը տեսնեմ որ,» ըսաւ, «իւրաքանչիւր պատուիրան յիշեալ չորս տեսակ փնասուց գլխաւորը կ'արգելու. զորօրինակ, սպանութիւնն, իբրեւ մեծագոյն փնաս կենաց, շնութիւնը՝ համեստութեան, գողութիւնն՝ ընչից, եւ սուտ վկայութիւնը՝ համբաւոյ: Մեծագոյն փնասուք կը հասկցուն անտարակոյս նաեւ փոքրագոյնը, զորօրինակ, սպանութեամբ կը հասկցուի ուրիշին կենաց դէմ ամէն փոքր վընաս, շնութեամբ՝ համեստութեան դէմ ամէն վընաս, նոյնպէս իմա եւ վասն այլոց: Հոսկ յետոյ օրէնքը կ'ամբողջանայ եւ կ'ըլլայ կատարեալ պատուէրով մը որ կ'արգելու ընկերին դէմ ամէն անդէպ կամ անվայել բաղձանք:»

«Կը խորհիմ նաեւ որ,» ըսաւ անհաւատը, «Մովսէս ո՞ր գտաւ այս օրէնքը: Մովսիսի ժամանակակից ազգերն, ինչպէս Եգիպտացիք եւ այլք կռապաշտ էին եւ չունէին այսպիսի օրէնք. Յոյնք եւ Հռոմայեցիք անգամ որ ետքը այնպէս անուանի եղան իմաստութեամբ եւ աշխարհավարութեամբ, նոյնպէս կռապաշտ էին, եւ չկրցան ասոր նման օրէնք մը շինել: Մովսէս ո՞ր գտաւ ուրեմն այս օրէնքը, որ այնպէս ի վեր է քան զիմաստութիւն եւ զէթիոսփայութիւն լուսաւորեալ ազգաց: Մովսէս այնպի-

սի դարու մէջ ապրեցաւ, որ մեր դարուն հետ բաղդատուելով կրնայ կոչուիլ բարբարոսական, բայց եւ այնպէս Մովսէս այնպիսի օրէնք մը տուաւ, որոյ մէջ բոլոր յաջորդ դարերու գիտունք եւ փիլիսոփայք չեն կրնար սխալ մը գտնել: Ո՛ր դտաւ Մովսէս այս օրէնքը. միթէ իւր դարուն բոլոր մարդոց իմաստնաբոյնն էր որ այսպիսի գործի մը ձեռնարկեց. ոչ: Յայտնի է ուրեմն թէ ուստի առաւ Մովսէս այս օրէնքը. յերկնուստ, Աստուծոմէ: Ապա ուրեմն պէտք է ընդունել թէ Սուրբ Գիրքը ճշմարիտ է:»

Անհաւատը շարունակեց հետեւել Աստուածաշունչ Գրոց, եւ օր քան զօր աւելի տեղեակ եղաւ անոր: Այս քննութեան արդիւնքը սա եղաւ, որ այս մարդը եղաւ նոր մարդ, թողուց հայհոյութիւնը, երդումն որ առաջ անոր ընտանի էր՝ շատ ատելի եղաւ, եւ կը յանդիմանէր իւր նախկին զուարճաբան ընկերները, երբ կը լսէր անոնց երդնուլը: Երդման անպիտանութիւնը կը ցուցնէր անոնց եւ կ'ըսէր. «Հիմա կը տեսնեմ թէ որչափ ցաւալի եւ զզուելի է երդումը, եւ կը զարմանամ թէ ինչպէս չէի տեսներ առաջ:» Անհաւատը որ այլ եւս չէր անհաւատ՝ Քրիստոնէութեան ճշմարտութեան վրայ հաստատուն հաւատով երեք տարի եւս ապրելով մեռաւ:

Այս անհաւատին Սուրբ Գիրքը քննելուն արդիւնքը կը ցուցնէ թէ որչափ ճշմարիտ էր անոր բարեկամին դիտողութիւնը թէ Աստուածաշունչին ճշմարտութեան հզօրագոյն ապացոյցը նոյն իսկ Աստուածաշունչին մէջ է: Անհաւատք շատ անգամ կը սկսին կարգաւ Սուրբ Գիրքը որպէս զի անոր

ստուծիւնը ցուցնելու փաստ գտնեն, բայց, ի զարմացումն իւրեանց, փոխանակ անոր ստուծեան ապացոյց գտնելու, անոր ճշմարտութեան եւ աստուածային ծագման ապացոյց կը գտնեն: Այս անհաւատը տեսնելով որ Մովսիսական օրէնքը ուրիշ հին ազգաց օրէնքներուն նայելով կատարեալ եւ գերազանց էր, ուրիշ բան չկրցաւ ընել բայց եթէ ընդունել անոր աստուածային ծագումը: Այս համոզումը բանաւոր թուեցաւ անոր քան իւր նախկին կարծիքը թէ Մովսէս արուեստիւ եւ հնարիւք խաբած էր Հրեաները: Բայց Աստուածաշունչին աստուածային ծագումը ցուցնող փաստ այն միայն չէ որով այս անհաւատն համոզուեցաւ: Ուրիշ հզօրագոյն փաստ մի եւս է՝ Սուրբ Գրոց այլեւայլ մասերուն մէջ գտնուած վարդապետութեանց սքանչելի ներդաշնակ համաձայնութիւնը: Աստուածաշունչը կը բաղկանայ 66 մասերէ, եւ դրուած է 40 հեղինակներէ որ իբր 1600 տարուան միջոցի մէջ ապրած են այլեւայլ ժամանակ: Ոմանք թագաւոր էին, այլք՝ ձկնորս: Այս այլեւայլ մասանց մէջ պատմուած դէպք, նկարագրուած տեսարանք, շատ կը տարբերին իրարմէ, բայց կրօնական վարդապետութիւնք եւ բարոյական պատուէրք նոյն են եւ նման, միայն աւելի վսեմ եւ բացայայտ են նորագոյն մասերուն քան հնագոյններուն մէջ: Սուրբ Գրոց վերջին հեղինակին Յովհաննու վարդապետութիւնները կը լրացնեն չէնքը զոր սկսած էր Մովսէս, առաջին հեղինակը: Հին կտակարանն ի սկզբանէ մինչեւ վերջը լի է մարդարէութեամբք գալու Մեսիային վրայ. նոր կտակարանը կը պատմէ մարգարէութեանց համեմատ արդէն եկած Մեսիային վարքը

եւ վարդապետութիւնը: Ի՞նչպէս կրնանք մեկնել այս 66 գրոց, եւ այլեւայլ ժամանակ իրարմէ զատ ապրող այնչափ հեղինակաց համաձայնութիւնը: Այս համաձայնութիւնը չի կրնար յառաջ գալ մարդկային ազդեցութենէ, քանզի ոչ մարդու մը եւ ոչ բազում մարդոց ազդեցութիւնը կրնար տեւել այնպէս երկայնաձիգ ժամանակ: Այս համաձայնութիւնը չէր կրնար յառաջ գալ, եթէ գրողներն առաջնորդուած չըլլային աստուածային զօրութենէ: Սուրբ Գրոց ճշմարտութիւնը եւ աստուածային ծագումը կը տեսնուին նաեւ ճշդութենէն որով կը նկարագրուին հոն մարդոց բարքը եւ վարքը: Աստուածաշունչն իբր թէ լուսանկարով առնուած պատկեր է մարդկային սրտին, եւ նկարին ճշմարտութիւնը զօրեղ ապացոյց է նոյն իսկ գրքին ճշմարտութեան: Սուրբ Գրոց մէջ նկարագրուած մարդիկ նոյն կիրքերն ունին զոր ունինք մենք: Աստուածաշունչն ինչպէս որ բարի մարդոց թրութիւնները չի ծածկեր, այլ կը յանդիմանէ այն մարդիկ եւ կը յորդորէ ապաշխարել, նոյնպէս չար մարդոց գովելի գործերն յիշելու զանց չըներ:

Միով բանիւ, Աստուածաշունչը ճիշդ այնպէս կը նկարագրէ զմարդիկ ինչպէս որ են, եւ ինչպէս մենք փորձիւ կը տեսնենք այսօր:

Սուրբ Գրոց աստուածային ծագումը ցուցնող փաստերէն զորս կրնայինք յիշել՝ մին եւս միայն կ'ուզենք ակնարկել, այսինքն՝ անոր բարոյական ազդեցութիւնն անոնց վրայ որ կը կարդան զայն եւ անոր պատուէրներուն կը հնազանդին: Սուրբ Գիրքն ուշադրութեամբ կարդալը փոխեց վերոյիշեալ անհաւատին բարքը եւ վարքը: Անհաւատը ոչ միայն

թողուց անհաւատութիւնը, այլեւ հայհոյութիւնները, սպասաւորին հետ չարաչար վարումը եւ ուրիշ չար սովորութիւններ, եւ եղաւ նոր մարդ: Աստուածաշունչը իւր ազդեցութեան անսացողները կ'աղնուացունէ, կը մաքրէ եւ ամէն բանի մէջ կ'ընէ զանոնք լաւագոյն: Ոմանք արդարեւ Աստուածաշունչը կարդալով չեն ըլլար լաւագոյն, վասն զի չեն տար տեղի անոր ազդեցութեան: Բայց ով որ կը հնազանդի Սուրբ Գրոց պատուէրներուն, կ'ըլլայ լաւագոյն մարդ, լաւագոյն հայր, ամուսին, բարեկամ, քաղաքացի, արժանի ուրիշներուն յարգանաց, եւ կատարող այն բաները որ ընդունելի են Աստուծոյ: Գիրք մը որ այսպէս առ Աստուած կը ձգէ զմարդիկ՝ հարկաւ Աստուծմէ է: Աստուածաշունչը կը ցուցնէ մարդոց թէ ինչպէս կրնան ընդունել Աստուծմէ ներում, մխիթարութիւն ի վիշտս, յոյս եւ ուրախութիւն ի ժամու մահուան եւ յաւիտեանական կեանք: Սուրբ Գիրքը կը ցուցնէ կենաց հացը, սրմէ եթէ ուտէ մարդ՝ երբէք չանօթենար, եւ կենդանի ջուրը՝ որմէ եթէ խմէ՝ երբէք չի ծարաւիր: Թերեւս գտնուին ըսողներ թէ այսպիսի հաց չկայ, եւ ոչ այսպիսի ջուր: Հարիւրաւոր, հազարաւոր, բիւրաւոր մարդիկ կը վկայեն ի փորձոյ, թէ Քրիստոս է այն հացը եւ այն ջուրը, վասն զի ի նմա եւ ի ծառայութեան նորա գտած են յագուրդ իրենց հոգեւոր քաղցին եւ ծարաւոյն: Եթէ ըսէր մէկը մեզի թէ լոյս եւ ջերմութիւն տուող արեգակ չկայ, ինչ պատասխան կու տայինք անոր: Ո՞չ ապաքէն կ'ըսէինք թէ գիտենք որ արեգակ կայ, վասն զի տեսած ենք անոր լոյսը եւ զգացած ենք ջերմութիւնը: Ով որ

կը կարգայ Սուրբ Գիրքը եւ կը հնազանդի անոր պատուէրներուն, կրնայ նոյնպէս տեսնել եւ զգալ թէ կենաց հացը որոյ վրայ կը խօսի այն գիրքը՝ է արդարեւ կենաց հաց, եւ կենդանի ջուրը որոյ վրայ կը խօսի՝ է ճշմարտապէս կենաց ջուր: Երանի՛ թէ այս տետրակը կարդացող ամէն մարդ սորվէր փորձով թէ ինչ մեծ ապացոյց է այս Սուրբ Գրոց ճշմարտութեան եւ աստուածային ծագման:

ԳԱՂԻԱՅԻ ԱՆՀԱԻԱՏԻՆ ՌՈՒՍՈՅԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՃԱՌԷՆ

ՔԱՂՈՒԱՍԾ

«Կը խոստովանիմ թէ ինչպէս որ Աւետարանին սրբութիւնը կ'ազդէ իւր զօրութիւնը սրտիս, նոյնպէս բոլոր Սուրբ Գրոց գերազանցութիւնը կը հիացունէ զիս: Կարդա մեր փիլիսոփաներուն բանիրուն գրուածները, պիտի տեսնես թէ ինչ ստորին են անոնք Սուրբ Գրոց քով: Մի՛թէ հնար է որ այսչափ պարզ միանգամայն վսեմ գիրք մը ըլլայ լոկ մարդու գործ: Մի՛թէ հնար է որ այն սրբազան անձը որոյ պատմութիւնը ունի այն Գիրքը՝ ըլլայ լոկ մարդ: Մի՛թէ կը խօսի՛ երբէք Յիսուս իբր ցնորամիտ ոք կամ փառասէր աղանդաւոր: Ի՛նչ քաղցր եւ յստակ է անոր վարդապետելուն կերպը, քանի՛ շնորհավի եւ ազդու են խօսքերը, որչափ վսեմ՝ առակները, որպիսի խորին իմաստութեամբ լի՝ քարոզները, որչափ ճշմարիտ, արագ եւ պատրաստ՝ պատասխանները, եւ ինչ մեծ՝ իւր կրից վրայ իշխանութիւնը: Ո՞ր մարդը, ո՞ր փիլիսոփան կրնայ այնպէս ապրիլ եւ մեռնիլ, ինչպէս ապրեցաւ եւ մեռաւ Յիսուս, առանց ցուցնելու տկարութեան կամ սնափառութեան նշան:

Պղատոն երբ կը նկարագրէր զբարի մարդ, ըսած է թէ՝ այնպիսին բազմադիմի զրպարտութիւններով կ'ամբաստանուի իբրեւ չքնաղ առաքինութեանց տէր, որ կարծես ճիշդ Յիսուսի վարքը կը նկարագրէ: Արդարեւ այնպէս սքանչելի նմանութիւն ունի Պղատոնի ըրած արդարին նկարագիրը Քրիստոսի վարուց, որ եկեղեցւոյ հարք տեսան եւ նշանակեցին:

Սոկրատ առանց ցաւի եւ առանց խայտառակութեան մեռնելով, դիւրաւ կրցաւ պահել իւր պատիւը մինչ ի վախճան իւր: Սակայն, եթէ անոր մահը այսպէս չպահէր անոր կեանքը, տարակուսելի է թէ արդեօք Սոկրատ իւր բոլոր իմաստութեամբն աւելի՞ էր քան սնափառ իմաստակ մը: Կ'ըսուի թէ Սոկրատ է հայր բարոյականի. բայց մի՛թէ մարդիկ յառաջ քան զնա անգէտ էին բարոյականութեան սկզբանց: Սոկրատ պատմեց առաքինի մարդոց վարքը որ եղան յառաջ քան զնա, եւ պատուիրեց հետեւիլ անոնց: Դեռ Սոկրատ արդարութեան սահմանը տուած չէր, Արիստիտէս արդարութիւն կը գործէր: Յառաջ քան զվարդապետելն Սոկրատայ թէ հայրենասիրութիւնը պարտք է, Լեւոնիդաս իւր կեանքը դրաւ հայրենեաց համար: Դեռ գոված չէր Սոկրատ ժուժկալութիւնը, ժուժկալ ժողովուրդ էին Սպարտացիք, եւ ոչ դեռ առաքինութիւնը սահմանած էր, մինչ Յունաստան լի էր առաքինի մարդերով:

Յիսուսի գալով, կը տեսնենք որ անիկա բոլորովին նոր, մաքուր եւ բարձր առաքինութիւն սահմանեց, եւ ինք եղաւ առաջին որ սորվեցուց զայն բանիւ եւ օրինակաւ: Բայց ո՞ր կրցաւ գլուխել Յիսուս այս բարոյականը. մի՛թէ իւր ազգին

եւ հայրենակիցներուն մէջ: Կոյր նախանձաւորութեամբ մոլեգնեալ ազգի մը մէջ յայտնուեցաւ Յիսուսի մեծ խմաստութիւնը, եւ այն որ մարդոց խոնարհագոյնը կը համարուէր երկրիս վրայ, եղաւ գերագոյն քան զամենայն մարդիկ:

Եթէ Սոկրատայ մահը բաղդատենք Յիսուսի մահուան հետ, դարձեալ անհուն տարբերութիւն կը տեսնենք: Սոկրատ մեռաւ իւր բարեկամներուն հետ խաղաղութեամբ խօսելով խմաստասիրութեան վրայ: Յիսուս բոլոր ազգէն նախատուած եւ զրպարտուած մատնուեցաւ նախատական մահուան եւ աւանդեց հոգին անհնարին ցաւերու մէջ: Սոկրատ օրհնեց զայն որ մահադեղը տուաւ անոր լալով. Յիսուս դառնակիծ չարչարանաց մէջ աղօթեց իւր անողորմ խաչահանուաց համար: Եթէ Սոկրատայ կեանքը եւ մահը վայելուչ էին փիլիսոփայի, Յիսուսի կեանքը եւ մահը վայելուչ են Աստուծոյ: Կան որ առասպել կը համարեն Յիսուսի սրտամութիւնը որ առասպելաբանութեան նշան ամենեւին չունի. ուր Սոկրատայ սրտամութիւնը զոր իբրեւ աներկբայելի կ'ընդունին՝ չունի այնչափ ապացոյց որչափ Յիսուսի սրտամութիւնը: Բայց Յիսուսի սրտամութիւնն կեղծ համարողներն ուրիշ բան չեն ըներ եթէ ոչ բանաւորը կարծել անբանաւոր. եւ անբանաւորը՝ բանաւոր, քանզի աւելի հակառակ է ուղիղ բանի ընդունել թէ շատեր միաբանեցան սուտ սրտամութիւն մը հնարելու, քան ընդունել թէ արդարեւ եղաւ Աւետարաններուն մէջ սրտամուտ վարքն ունեցող անձ մը: Դիտողութեան արժանի է մանաւանդ որ Հրեայք կարող չէին այն կերպով վարդապետել, չեւ չունէին գա-

ղափար այն բարոյականին վրայ զոր կը սորվեցունէ Աւետարանը, եւ որ է այնպէս սքանչելի եւ աննման, որ զայն հնարողներն իւր խաբեբաներ աւելի զարմանալի մարդիկ ըլլալու էին քան այն Անձը որ այն բարոյականին իբրեւ տէր կը սպասուէ:»

ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՃԵՍԱՐՏՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ ՓԱՍՏ

Աւետարանը գրողները պարզամիտ, անուս եւ ստորին աստիճանի մարդիկ ըլլալով, չէին կարող ինքնին հնարել եւ տարածել այնպիսի նուրբ եւ սքանչելի կերպով կապակցեալ խաբէական կրօնք մը, ինչպիսի պիտի ըլլար Քրիստոնէութիւնը եթէ ճշմարիտ չըլլար: Աւետարաններուն սրտամութիւնը լի է անկեղծութեան, պարզմտութեան, հաւատարմութեան եւ ճշմարտութեան նշաններով, այնպէս որ Քրիստոնէութեան յիստիմ թշնամիք անգամ չկրցան խաբէութեան եւ խարդախութեան փոքր նշան մը գտնել այն գրուածներուն մէջ: Ապա ուրեմն Քրիստոնէութիւնն աւետարանիչներուն հնարքը չէ իբր խաբեբաներու, մանաւանդ որ անոնք այսպիսի խաբէութեանէ ոչ շահ կրնային սպասել եւ ոչ զօրութիւն, ընդհակառակն հալածանք, նեղութիւն եւ մահ, ինչպէս եղաւ իսկ: Հարկ է ուրեմն ըսել թէ, եթէ անոնք խաբեբայ էին, սուտ խօսեցան ի վնաս իւրեանց, եւ հակառակ բնութեան մարդկային գործողութեանց որոց շարժառիթն ընդհանրապէս շահն է:

Առաքեալք կը քարոզէին հաւատք մը որ կը դատապարտէր ստուտութիւնը իբրեւ յաւիտենական պատժոյ արժանի, մինչ իրենք, ըստ կարծեաց անհաւա-

տից, այն հաւատքը ստուգեամբ կը հաստատէին. անարգութեամբ եւ առանց շահու կը ջանային խաբել զաշխարհ ըստ անհաւատին, մինչ, գիտենք, եւ անհաւատք իսկ կը խոստովանին, թէ անոնք ծանր աշխատութիւն եւ անհնարին տառապանք կը կրէին բոլոր մարդոց արդարութիւն սորվեցունելու: Միթէ հաւատալի՞ է այս: Ո՛չ երբէք: Ամէն ողջամիտ մարդ պէտք է որ մերժէ այս այլանդակ կարծիքը, եւ խոստովանի թէ արդարեւ ճշմարտախօս եւ արժանահաւատ են աւետարանիչք:

ՄԱՆ Է ՓԱՌԱՅ ՃԱՄԲԱՅ

Բարի մարդու մը համար մահը ուրիշ բան չէ, բայց եթէ իւր հօր տան մի փոքր խաւար սենեկէն դուրս, մութ գաւթի մը մէջէն անցնելով, երթալ ուրիշ մեծ եւ գեղեցիկ, չքեղ եւ լուսաւոր սրահ մը, ուր պիտի ընդունի զնա նոյն ինքն Աստուած:

Ո՛վ իմ երկնաւոր բնակարանիս լոյսը եւ փառքը, երանի՛ թէ ծագէիք դէպ ի վար, եւ լուսաւորէիք այն մութ գաւթին այնպիսի սլոյճառութեամբ որ, երբ այն գաւթէն անցնելու կանչուիմ, փարատին երկիւղներս:

ՄԱՆ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ

Մահն եւ Քրիստոնեայն անգամ մը հանդիպելով իրարու, սկսան խօսել այսպէս.

Քրիստոնեայն. « Բարի եկար, ո՛վ անմահութեան դեսպան, բարի եկար, եւ հազար բարի: »

Մահ. « Ի՞նչ համարձակութիւն է այդ, ով որդի մեղաց, չէ՞ս երկնչիր իմ երեսէս: »

Ք. « Ոչ. բարի Քրիստոնեայն կրնայ աներկիւղ նայիլ քու երեսդ: »

Մ. « Կրնաս առանց ահիւ եւ դողութեամբ նայիլ յիս որ կը նեղեմ զքեզ հիւանդութեամբ եւ ցաւերով. կրնաս համբերել այն ցուրտ քրտանց զորս կը կաթեցունեմ թեւերէս: »

Ք. « Ա. յո, կրնամ. ատոնց եւ ոչ մին կրնայ երկիւղ տալ ինձ: »

Մ. « Կը զարմանամ. այդ աներկիւղութեան սլառձառն ի՞նչ է, ըսէ որ հասկնամ: »

Ք. « Աներկիւղութեանս սլառձառն այս է. գիտեմ որ թէպէտեւ այսպէս արագ մօտենալով ինձ, ժամանակ մը մարմինս պիտի նեղես, սակայն հոգւոյս վրայ զօրութիւն բնաւ չունիս: »

Մ. « Ո՞վ ես դու, ո՛վ մահկանացու, որ մօտենալս բնաւ զօրութիւն չունի քեզ դողացնելու: »

Քրիստոնեայն քաղցրութեամբ ժպտելով մահին երեսն ի վեր՝ ըսաւ. « Ես Քրիստոնեայ եմ, մահուան զօրութիւնը Յաղթողին արեամբ արդարացեալ: »

Անատեն մահը կտրեց Քրիստոնէին շունչը, եւ երկուքը միանգամայն եղան աներեւոյթ: Միայն թէ փոս մը բացուած էր անոնց ոտքին տակ, եւ այն փոսին մէջ բան մը դրուեցաւ:

Մինչ ես կու լայի, յանկարծ երկնային ձայներ հնչեցին ականջիս. նայեցայ վեր եւ տեսայ Քրիստոնեայն ամպերուն մէջ: Անոր երեսը կը փայլէր այն խնդութեամբ զոր ունէր քիչ մը յառաջ քան զիւր մահ, եւ ձեռուրները կցած էր կուրծքին վըրայ: Լուսեղէն հրեշտակներ ուրախութեան ձայներով մօտեցան անոր, ինքն եւս սկսաւ փայլիլ անոնց պէս: Անատեն դարձեալ լացի, եւ փոսին մէջ նայելով տեսայ որ հոն դրուածը Քրիստոնէին մարմինն էր, հոգին թռած էր երկինք:

«Տէր» ըսաւ Պր. Ապառուս, «ես կեղծաւորութիւնը կ'ատեմ, ուստի եթէ կ'ուզես գիտնալ թէ ինչ եմ. քեզի կ'ըսեմ, անաստուած եմ: Արդարեւ շատ քիչ մարդ կը խոստովանի զինք անաստուած. բայց կարծեմ թէ մարդոց մեծագոյն մասն անաստուած է, ուստի եւ ես այս մեծ մասէն եմ: Մարդոց՝ քսանէն տասնեւինը կ'ըսէ թէ կը հատայ Աստուծոյ. բայց չի հաւատար. քանզի, եթէ հաւատային մարդիկ Աստուծոյ նախախնամութեան, միթէ այսպէս կը արտնջէին: Եթէ կը հաւատան Աստուծոյ ողորմութեան, ինչո՞ւ համար այսչափ քիչ կ'աղօթեն: Եթէ կը հաւատան Աստուծոյ դատաստանին, ինչո՞ւ համար այսչափ մարդիկ կ'արբենան, կ'երդնուն, կը խաբեն զիրար, եւ ամէն չարիք կը գործեն: Ա, յո, տէր. մարդոց շատերն անաստուած են, բայց չեն համարձակիր ըսել ինչ որ են: Իսկ ես կը համարձակիմ ըսել, եւ կ'ըսեմ ահաւասիկ. Ոչ Աստուած կայ, եւ ոչ Սատանայ:»

Այսպէս կը խօսէր իւր բարեկամներէն մէկուն ծեր մարդ մը որ խմաստուն կը համարէր զինք եւ կը պարծէր եւս թէ միսիթարութեան համար կարօտ չէր ոչ կնոջ, ոչ զաւկի եւ ոչ բարեկամի:

«Ի՞նչ բանի կը հաւատաս ուրեմն,» հարցուց բարեկամը:

«Կ'ուզես գիտնալ թէ ի՞նչ բանի կը հաւատամ,» ըսաւ անաստուածը. «ըսեմ քեզի. կը հաւատամ եզան մտոյ խորովածի. լրագրի եւ ծխախոտոյ, քիչ գործելու եւ որչափ հնար է շատ վարձ առնելու: Ահա իմ դաւանութիւնս: Մարդուս գըլ-

խաւոր վախճանն է ձեռքը երկնցունել առնուլ ինչ որ կրնայ, եւ ինչ որ կ'առնու՝ պահել:»

«Բայց ասոնք անցաւոր բաներ են,» ըսաւ բարեկամը. «Ի՞նչ տեւական բարիք կը հաւատաս թէ կայ մարդուս համար:»

«Վեց ոտք երկայն եւ երեք ոտք լայն փոս մը,» ըսաւ անաստուածը. «մահն է մեծ փրկիչ, եւ մեր մի միայն տեւական բաժինը:»

«Ուրեմն բոլոր յոյսդ ջնջում եւ կորուստ է,» ըսաւ միւսը:

«Ա, յո,» ըսաւ անաստուածը. «եւ միթէ բաւական բարիք չէ՞: Քան զայս աւելի ի՞նչ կրնանք սպասել:»

«Ապա ուրեմն բոլոր մարդոց փրկիչը մահն է. այնպէ՞ս է,» հարցուց բարեկամը:

«Ես այսպէս կը հաւատամ,» ըսաւ Պր. Ապառուս:

«Ահա, հիմա հասկցայ թէ ինչ է անաստուած մը,» ըսաւ բարեկամը: «Անաստուած այն մարդն է որ, կը հաւատայ թէ մահն է աստուած, եւ ապականութիւնը կը պաշտէ իրեւ թագաւոր թագաւորաց եւ տէր տերանց: Մինչ Քրիստոնեայք կը հաւատան կենաց, դուք կը հաւատաք մահուան: Այնչափ յիմար ես որ կը հաւատաս թէ միտքդ մեծագոյն միտքն է աշխարհիս վրայ, եւ այնչափ նուաստ ես, որ կը հաւատաս թէ մահը քան զկեանս զօրաւոր է: Ըսիր թէ չես հաւատար ոչ Աստուծոյ եւ ոչ Սատանայի: Բայց կը տեսնեմ որ կը հաւատաս մեծ դիւի մը որ ստեղծեց զմարդ որպէս զի կորսնցունէ, եւ բոլոր աշխարհք ըրաւ իրեւ մեծ գերեզման մը, ուր մարդիկ եւ անասունք, բարին

եւ չարը հաւասարապէս կը թաղուին: Դուն այս դեւ աստուծոյ կը մատուցանես այն պաշտօն որ անոր հաճելի է: Մենք կը պաշտենք մեր Աստուածը սիրով, վստահութեամբ եւ փառաբանութեամբ. դուք կը պաշտէք ձեր աստուածն ատելութեամբ, երկիւղիւ եւ կասկածանօք: »

Այս խօսքին վրայ սկսաւ քիչ մը խորհիլ ողորմելին Ապառոււմ, քանզի իւր փիլիսոփայական հաւատքը քան որ եւ իցէ հաւատք նախամեծար կը համարէր, բայց ծանր թուեցաւ անոր լսել թէ դիւի մը երկրպագու է եւ ոչ այլ ինչ, ուստի եւ խոյս տուաւ: Այս խօսակցութիւնը լսելով՝ ես համոզուեցայ թէ մարդս քան զինք մեծ բանի մը հաւատալու է: Եւ եթէ մարդ մը չի հաւատար Աստուածաշունչի Աստուծոյն, որ կը սիրէ զմարդ եւ տուաւ իւր Որդին փրկիչ մարդկան, որ կը լսէ մեր աղօթքը եւ բոլոր խնդրողներուն կու տայ յաւիտենակտն օթեւան, եթէ, կ'ըսենք, մարդ մը չի հաւատար այս Աստուծոյ, պէտք է որ հաւատայ այնպիսի աստուծոյ մը որ է անգութ, անողոք եւ սատակիչ: Ընթերցող, դուն Անաստուած ես թէ Քրիստոնեայ:



30K

6047

ՅԱՆԿ ԳՐԱՑ ԵՒ ՏԵՏՐԱԿԱՑ

ՈՐ ԿԸ ԾԱԽՈՒԻՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ ԱՄԵՐԻԳԱՆ ԽԱՆԻ ԳՐԱՏՈՒՆԸ



	ԵՐԵՍ
Փարոսի մը պատմութիւնը	36
Ճէսիգայի առաջին աղօթքը	36
Նկարագրութիւն դարձին Շլումպախ անուն անհաւատ Գերմանացոյն	29
Երկու որբոց պատմութիւնը	24
Երկու գառնուկներուն պատմութիւնը	24
Թէ ինչ յարաբերութիւն կայ Տէրունա- կան ընթրեաց եւ եկեղեցոյ բար- ւոք վիճակին մէջտեղ	16
Իւր խօսքին հաւատարիմ մարդ	11
Մահը դիմաւորել յուսով կամ երկիւ- ղիւ	10
Մօր մը խօսքերը	8
Գրովտիոս եւ անոր խոստովանութիւնը մահուան ժամանակ	8
Օրհնեալ մատեանը	7
Առաջագրութիւնք քրիստոնեայ առն	7
Մօր մը դիտաւորութիւնը եւ որոշումը որդւոց կրթութեան համար	7

2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՏՈՒՆԸ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
2013

